ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-21-9/35-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06 -ը դեկտեմբերի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա.Շեգունցի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **28.10.2021թ**. կնքված № **ԳՀԱՊՁԲ-21-9/35-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն **Հավելված № 1-ի և 2-ի**:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***1,020,000 (մեկ միլիոն քսան հազար) ՀՀ դրամ,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Նանսենի 7/43 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Խորհրդային մ/ճ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 163078039498 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 09212215 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ա. ՇԵԳՈՒՆՑ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/35-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ 2021թ., 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ. |
| 1. | Էպենդորֆներ | հատ | 10,000 | 25 | 250,000 | 10,000 |
| 20. | Մանրէաբանական օղ 1մկլ | լրակազմ | 50 | 3000 | 150,000 | 50 |
| 22. | Բամբակյա SWABS | հատ | 3,000 | 90 | 270,000 | 3,000 |
| 23. | Փորձանոթ մանրէաբանական հետազոտությունների | լրակազմ | 500 | 100 | 50,000 | 500 |
| 25. | Պետրիի թասիկներ | հատ | 2,000 | 150 | 300,000 | 2,000 |
| **Ընդամենը** | | | | | **1,020,000** | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/35-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| չ/հ | CPV և ապրանքի անվանումները | CPV կոդը | Վճարումը նախատեսվում է իրականացնել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 24.12.2021թ. |
| 1. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Էպենդորֆներ | 33691167/7 | 250,000 |
| 20. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Մանրէաբանական օղ 1մկլ | 33691420/69 | 150,000 |
| 22. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Բամբակյա SWABS | 33691167/43 | 270,000 |
| 23. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Փորձանոթ մանրէաբանական հետազոտությունների | 33691420/100 | 50,000 |
| 25. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Պետրիի թասիկներ | 33691167/49 | 300,000 |
| **Ընդամենը** | | | **1,020,000** |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՇԵԳՈՒՆՑ